«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

ՀՀ,ք.Երևան 0010

Տիգրան Մեծ 4

Հեռ. +374 10 524 724

Անկախ աուդիտորի եզրակացություն

Վանաձոր համայնքի ղեկավարին և ավագանուն

Եզրակացություն բյուջեի կատարման տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Վանաձոր համայնքի (այսուհետ՝ «Համայնք») կից ներկայացվող հատուկ նպատակի հիմունքների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի հաշվետվությունները:

Մեր կարծիքով, կից բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում տարեկան բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի մասին 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական պատկերը՝ համաձայն «Բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև «Հատուկ նկատառումներ-հատուկ նպատակի հիմունքների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ» (ԱՄՍ 800) ստանդարտի:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք համայնքապետարանից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք ,որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսա հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է «Բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների, ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև համայնքն բյուջեի կազմման հրահանգին համապատասխան տարեկան հաշվետվությունների պատրաստման և ճշմար ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար,որն ըստ ղեկավարության,անհրաժեշտ է խարդախության և սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահով համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է համայնքապետարա անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը,ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար,եթե ղեկավարությունը չունի համայնքը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են համայնքի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էակ առումներով զերծ են էական խեղաթյուրումներից,անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է ,բայց այն չի երաշխավորում,որ ԱՄՍ-նե համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը,երբ այն առկա Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական,ե խելամտորեն կարող է ակնկալվել,որ դրանք առանձին կամ միասին վերցրած,կազդեն ֆինանսական հաշվետվությունն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտակ դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը,նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով,և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ,որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էակ խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է ,քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը,քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն,զեղծարարություն,միտումնավոր բացթողումներ,սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- Ձեռք ենք բերում աուդիտին առընչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և՝ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը,ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ,և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք թե՛ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն,որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք,որ առկա է էական անորոշություն,ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին,կամ,երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն,ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:
  Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը,կառուցվածքն ու բովանդակությունը,ներառյալ՝ բացահայտումները,ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Կառավարման օղակներում գտնվող անձանց,ի թիվս այլ հարցերի,հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների,ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի,ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

28 փետրվար, 2024 թ.

Հարգանքով՝

Տնօրեն Ա. Բաբայան